

այս թագաւորին 1472 թուին գրած երկու հրովարտականքուն մէջ — մին գրուած փետրվ . 18-ին եւ միւսը՝ մարտի 24-ին — կը տեսնուի « Հայոց թագաւոր » տիտղոսի գործածուած ըլլալը : Իսկ Հայոց թագաւորութեան տիտղոսը պաշտօնապէս կրող վերջին վաւերագիրը, որ Կատարինէ Կորնարո թագուհին կտակն է , հոյնութեամբ կը գնեմ հոս իբրեւ թանկագին յիշատակարան մը (1) :

Կասարիկն Կորնարոյի կսակը

Մենք Կասարիկն Լուսինեան, շնորհիւն Աստուծոյ քաղուհի Երուսաղէմի, Կիպրոսի եւ Հայաստանի, մտածելով որ կրնանք մեկնիլ այս աշխարհէն առանց ո՛ր եւ է կսակ մը հաստատած եւ ըսած ըլլալու , մեր կամքն է զայն կարգաւորել մանրամասն կերպով եւ զլիսաւորապէս կարգել քե՛ս ո՛վ պիտի յաջորդէ , ինչպէս պատշաճ է , մեր իշխանութեան . եւ այս մտածութեամբ խորհեցանք մեր յատուկ ձեռնով ընել այս գրութիւնը, անոր համար—Աստուած մի՛ արասցէ— որ եթէ պատահի որ չկարենանք ընել (վերոյ)ասացեալ կսակը, որպէս զի ասով յայտնուի մեր յետին կամքը: Ասոր համար կ'ուզենք եւ կը հրամայենք որ ընդհանրական ժառանգն (ըլլայ) մեր ընչից, եւ անոնց՝ որ մեզի պիտի կարենան գալ, ինչպէս նաեւ մեր օժիտին, մեծաւուր ասպետն Տէր Գեորգ Կորնէր, մեր միակ եղբայրը , ինչպէս որ իրաւունքը կը պահանջէ , աղաչելով զինքն որ եթէ առիթը ներկայանայ՝ քող հանի յանձնարարել մեր հոգին, ինչպէս որ վստահ ենք քե՛ս պիտի ընէ : Այսպէս՝ քող հանի նա բարեբարել մեր փոքրերուն , եղբորդիներուն ու քուրդիներուն , ազգականաց եւ ծառայից եւ օրիորդաց , ինչպէս որ լաւագոյն պիտի երեւի իր խոհեմութեան , եւ զլիսաւորապէս այն անձանց՝ որոնք մեզմէ ո՛ր եւ է բարեբարութիւն մը ընդունած չեն : Նոյնպէս նաեւ քող կարգադրութիւններ ընէ մեր քաղման համար , բահանայից համար , ողորմութեանց համար , եւ մեր հոգւոյն փրկութեան համար ըլլալիք այլ բարեբարութեանց համար , ինչպէս որ վայել է մեր աւտիմանին : Այս է մեր վերջին կամքը, եթէ ուրիշ կսակ մը չկարենանք ընել :

Կնքուած մեր կնիքով :

Տուեալ ի Վենետիկ , ի սան մեր բնակութեան ի Ս. Կատանոյ , մեր յատուկ ձեռնով , յառաջնում աւուր Մայիսի :

(1) Բնագիրը գրուած է հին իտալերէնով : Թարգմանութիւնը կը պատրաստուի Վեր. հ. Մ. վ. Պոստոլեանին :